Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հունիսի 6-ի N 318-Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՓՐԿԱՐԱՐ, ԲԱԶՄԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

1.	Ծրագրի նպատակը	Անազատ պայմաններում պահվող, լքված և/կամ հիվանդ, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների փրկում, ապաստարանի տրամադրում, համապատասխան խնամքի կազմակերպում, բազմացման, աղապտացման և վերաբնակեցման իրականացում: **Գորշ արջերի ապաստարան** - Պահպանելու գորշ արջի վայրի պոպուլյացիան, տրամադրելու համապատասխան կացարանային պայմաններ անազատության մեջ պահվող գորշ արջերին՝ տրամադրելով մասնագիտական խնամք և հնարավորության դեպքում իրականացնել նրանց վերադարձը վայրի բնություն: **Անգղների բազմացման և վերաբնակեցման կենտրոն** - Պահպանելու և կազմակերպելու ՀՀ Կարմիր գրքում գրանցված անգղների բազմացումը անազատ պայմաններում և իրականացնելու նրանց վերաբնակեցումը՝ համագործակցելով միջազգային գործընկերների հետ: **Կովկասյան ընձառյուծի աղապտացման և վերաբնակեցման կենտրոն** - Իրականացնելու Կովկասյան ընձառյուծի երիտասարդ առանձնյակների աղապտացման ընթացքը Հայաստանում և վերաբնակեցման գործընթացը տեսակին բնորոշ կենսամիջավայրում՝ նպաստելու Կովկասյան ընձառյուծի վայրի պոպուլյացիայի թվաքանակի ավելացմանը բնության մեջ: Ծրագիրն ուղղված է փրկելու, համապատասխան խնամք և ապաստարան տրամադրելու, հնարավորության դեպքում վայրի բնություն վերադարձնելու ՀՀ Կարմիր գրքում գրանցված, հիվանդ, լքված կամ անազատության մեջ պահվող կենդանիներին, ինչպես նաև կազմակերպելու և իրականացնելու ՀՀ Կարմիր գրքում գրանցված անգղների բազմացման և Կովկասյան ընձառյուծի երիտասարդ առանձնյակների աղապտացման և վերաբնակեցման գործընթացը:

2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ծրագիրը ֆինանսավորում են՝ Վայրի կենդանիների փրկարարական կենտրոն/ International Animal Rescue–**430,000 եվրոյին** համարժեք ՀՀ դրամ՝ հինգ տարվա համար Բրիջիթ Բարդո հիմնադրամ/ Brigitte Bardot Foundation –**35,000 եվրոյին** համարժեք դրամ՝ երկու տարվա համար «Բեարզ ին Մայնդ» /Bears in Mind – **15,000 եվրոյին** համարժեք ՀՀ դրամ՝ երկու տարվա համար «Արտիսի» Թագավորական կենդանաբանական այգի/ Artis Royal Zoo -**50,000 եվրոյին** համարժեք ՀՀ դրամ՝ հինգ տարվա համար Անգղների բնապահպանական հիմնադրամ/ Vulture Conservation Foundation -**7,500 եվրոյին** համարժեք ՀՀ դրամ՝ երկու տարվա համար Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի Գերմանիայի մասնաճյուղ / E.V. Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets Germany / -**85,000 եվրոյին** համարժեք ՀՀ դրամ՝ երեք տարվա համար
4.	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող և իրականացնող է հանդիսանում **Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը** (գործող հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 47/1, բն. 14, ՀՎՀՀ՝ 02565835, հեռ.՝ 010 58-58-84
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագրի իրականացման վայր է հանդիսանում Արարատի մարզը: Ծրագրի ուղղվածությունը բնապահպանական և կրթական է՝ ուղղված պահպանելու ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանմանը, բազմացմանը, աղապտացմանը և վերաբնակեցմանը:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի արժեքն է՝ 5 տարվա համար **622,500** եվրոյին համարժեք՝ **339,573,750** ՀՀ դրամ (2019 թ.-ին ծրագրի փոփոխությունների օրվա դրությամբ փոխարժեքին համապատասխան (**1** եվրոն = **545.5** ՀՀ դրամ))
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրում ընդգրկված են՝ - Ֆիզիկական անձինք, ովքեր անազատ պայմաններում են պահում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների, օր.՝ գորշ արջեր.

		- Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը. - ՀՀ բնապահպանության նախարարությունը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը շարունակական է և իրականացվում է 2016 թ.-ից, այժմ որակավորման է ներկայացվում 2017 թ.-ի նոյեմբերի 01-ից մինչև 2022 թ.-ի դեկտեմբերի 31-ը իրականացվելիք ծրագիրը:
9.	Միջոցառումների նկարագրությունը, ժամկետները և անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	**1. Գորշ արջերի ապաստարանի և Կովկասյան ընձառյուծի աղապտացման և վերաբնակեցման կենտրոնի կառուցում- 164,023,750 դրամ. 11,920,244 դրամ՝ 01.12.2017 թ.-31.12.2018 թ.-ի համար և 152,103,506 դրամ՝ 01.01.2019 թ.-31.12.2022 թ.-ի համար** 1.1. Կենդանիների պահպանման տարածքի կառուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսեր՝ 2017-2020թթ. 1.2. Կենդանիների պահպանման տարածքի կառուցման համար անհրաժեշտ կառուցապատման աշխատանք-ներին ուղղված ծախսեր՝ 2017-2020թթ. 1.3. Կենդանիների փախուստի և այլ վայրի կենդանիների տարածք ներխուժման անվտանգության ապա-հովման համար էլեկտրական ցանկապատ համակարգերի տեղադրման ծախսեր՝ 2017-2020 թթ. **2. Անգղների բազմացման և վերաբնակեցման կենտրոնի կառուցում - 9,280,000 դրամ՝ 01.12.2017 թ.-31.12.2019 թ.-ի համար** 2.1 Թռչունների պահման պահանջներին համապատասխան հատուկ վանդակների կառուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսեր՝ 2017-2019 թթ. 2.2 Թռչունների պահման պահանջներին համապատասխան հատուկ վանդակների կառուցապատման աշխատանքներին ուղղված ծախսեր՝ 2017-2019 թթ. **3. Կենդանաբուժական և լաբորատոր կենտրոնի կառուցում- 33,510,000 դրամ՝ 01.12.2017 թ.-31.12.2022 թ.-ի համար** 3.1 Կենդանաբուժական և լաբորատոր կենտրոնի կառուցման ծախսեր՝ 2017-2020 թթ. 3.2 Կենտրոնին անհրաժեշտ սարքավորումների և պարագաների ներմուծման և ձեռքբերման ծախսեր՝ 2017-2022 թթ.

		4. Գորշ արջերի փրկարարական աշխատանքների և հետագա խնամքի կազմակերպման ծախսեր - 132,760,000 ՀՀ դրամ. 4,777,266 դրամ՝ 01.12.2017 թ.-31.12.2018 թ.-ի համար, 127,982,734 դրամ՝ 01.01.2019 թ.-31.12.2022 թ.-ի համար 4.1 Մսնդի ձեռքբերման և կենդանիների սննդակարգի ապահովման ծախսեր՝ 2017-2022 թթ. 4.2 Կենդանիների խնամքն ապահովելու համար դեղերի ներմուծման և ձեռքբերման ծախսեր՝ 2017-2022 թթ. 4.3 Կենդանիների փրկարարական աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերման ծախսեր՝ 2017-2022 թթ. 4.4 Կենդանիների խնամքի պարագաների ձեռքբերման ծախսեր՝ 2017-2022 թթ.
10.	Ձեռքբերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում ծախսվում է՝ ***Ծուրջ 164,023,750 դրամ՝*** վայրի կենդանիների պահպանման տարածքի կառուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսեր՝ **70,658,000** դրամ (**11,920,244 դրամը** ծախսված, մնացորդը՝ **58,737,756 ՀՀ դրամ**) և կառուցապատման աշխատանքներին ուղղված ծախսեր՝ **79,665,750** դրամ էլեկտրական ցանկապատ համակարգերի տեղադրման ծախսեր՝ **13,700,000** դրամ: ***Ծուրջ 9,280,000 դրամ՝*** թռչունների պահման հատուկ վանդակների կառուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսեր՝ **4,880,000** դրամ և կառուցապատման աշխատանքներին ուղղված ծախսեր՝ **4,400,000** դրամ (***4,398,641*** դրամը ծախսված, մնացորդը՝ **1,359** դրամ): ***Ծուրջ 33,510,000 դրամ՝*** կենդանաբուժական և լաբորատոր կենտրոնի կառուցման ծախսեր՝ **17,825,000** դրամ, անհրաժեշտ սարք-սարքավորումների և պարագաների ձեռքբերման՝ **6,235,000** դրամ և **9,450,000** ներմուծման ծախսեր: ***Ծուրջ 132,760,000 դրամ՝*** սննդի ձեռքբերման և կենդանիների սննդակարգի ապահովման ծախսեր՝ **74,570,000** դրամ (3,530,350 ծախսված, մնացորդը՝ 71,039,650 **դրամ**), կենդանիների խնամքն ապահովելու համար դեղերի ձեռքբերման **9,790,000** դրամ և ներմուծման համար **24,830,000** դրամ (**1,246,916** դրամը ծախսված, մնացորդը՝ **23,583,084** դրամ) ծախսեր, կենդանիների փրկարարական աշխատանքներն իրակա-նացնելու համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերման ծախսեր՝ **8,740,000** դրամ, կենդանիների խնամքի պարագաների ձեռքբերման **6,680,000** դրամ և ներմուծման **8,150,000** դրամ ծախսեր:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր ծրագրով նախատեսված չեն և իրականացվելու են Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի սեփական միջոցներով:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ, մարզպետարաններ, այլ առևտրային կազմակերպություններ և իրավաբանական անձինք:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվություն կներկայացվի դոնորներին, ինչպես նաև սահմանված կարգով ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության համապատասխան լիազոր մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ